ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՌԱՉՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՀՏԴ 378(55)

ՀԱՄԻԴՈԵԶԱ ԿԱՄԻԱՐ
Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնի ասպիրանտ,
«Էլեկտրիկ խողոռ շարող կապմակերպության»
մարդկային ռեսուրսների զարգացման կառավարիչ,
ք.Մաշհադ, Իրան
kamyarhr@gmail.com

Մեծահասակների կրթության ոլորտում նախատեսված նպատակներին հասնելու համար պետությունները, հաշվի առնելով ռեսուրսների սղությունը, ստիպված են լինում ընտրություն կատարել, այդ իսկ պատճառով սահմանում են ռապմավարություններ և կապմակերպում քայլեր, որոնք կարևորվում են կրթական քաղաքականություն մշակողների կողմից: Բոլոր երկրներն իրենց համար մշակում են ռապմավարություններ՝ անգրագիտությունը կամ ցածր մակարդակի գրագիտությունը կրճատելու, ինչպես նաև մեծահասակների կյանքի որակը բարձրացնելու ուղղությամբ: Իրանում մեծահասակների կրթության ծրագրերի առանցքը անգրագիտության դեմ պայքարն է, ուստի Իրանի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրերում կրթական քաղաքականությունը և ռապմավարությունները կենտրոնացված են այդ առանցքի շուրջ: Հոդվածի նպատակն է քննել երեք տարբեր մայրցամաքներում սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող երկրների՝ Ռուանդայի (Աֆրիկա), Մոնղոլիայի ու Հնդկաստանի (Ասիա), Եվրամիության անդամ երկրների, ինչպես նաև Իրանի կողմից մեծահասակների կրթության ոլորտում առաջադրված սեփական ռապմավարությունները: Մեր կողմից կիրառվել են աղբյուրների ու փաստաթղթերի ուսումնասիրության, տվյալների համեմատության ու վերլուծության մեթոդները: Արդյունքում եզրակացրել ենք, որ զարգացող երկրներն ավելի շատ հակված են անգրագիտության և ցածր գրագիտության վերացման ռապմավարություններին, մինչդեռ զարգացած երկրները, չունենալով նման խնդիրներ, առաջադրում են առավել բարդմակողմ ռապմավարություններ՝ խթանելով մեծահասակների անձնային ու հասարակական համակողմանի զարգացումը:

Բանալի բառեր՝ *մեծահասակ, մեծահասակների կրթություն, կրթության ռապմավարություններ, անգրագիտություն, զարգացող և զարգացած երկրներ, Եվրամիություն, Իրանի կրթության համակարգ:*

Մեծահասակների կրթությունը մեծահասակների գիտակցության, ճանաչողության ու հմտությունների զարգացմանն ուղղված համակարգված գործընթաց է, որով նրանք կարողանում են կատարելագործվել և ակտիվորեն մասնակցել իրենց հասարակության սոցիալական, մշակութային, քաղաքական ու տնտեսական կյանքին[458]:

---

* Հոդվածը ներկայացվել է 01.05.2019թ., գրախոսվել՝ 18.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

[458] *www.regardhost.com/articles/human.rights.php:*

ՄԱԿ-ի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների մասին հռչակագրի 26-րդ հոդվածն ամրագրել է յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքը: Այս հոդվածը բաղկացած է երեք կետից, որոնցից առաջինը հստակեցնում է. «Մեծահասակները ևս ունեն կրթություն ստանալու իրավունք: Ամեն ոք ունի կրթություն ստանալու իրավունք: Կրթությունն առնվազն տարրական մակարդակում պետք է լինի անվճար: Արհեստագիտական ու տեխնիկական կրթությունը պետք է հասանելի լինի բոլորին: Բարձրագույն կրթությունը ևս բոլորի համար պետք է արդարացիորեն բաշխվի՝ ըստ ունեցած արժանիքների առաջնահերթությամբ»:

Ամբողջ աշխարհում 1970թ.-ից մինչև 2016 թվականը մեծահասակների, ինչպես նաև հանրակրթությունից դուրս մնացած15-ից բարձր տարիք ունեցող պատանիների անգրագիտության մակարդակն ակնառու չափով նվազել է՝ 37 տոկոսից իջնելով 14 տոկոսի, այդուհանդերձ անգրագիտությունը շարունակում է գոյություն ունենալ զարգացող շատ երկրներում[459]:

2016 թվականի տվյալներով՝ աշխարհում անգրագետների թվաքանակի 49 տոկոսը Հարավային Ասիային է բաժին հասնում, 27 տոկոսը՝ Աֆրիկյան ենթասահարային, 10 տոկոսը՝ Արևելյան և Հարավարևմտյան Ասիային, 9 տոկոսը՝ Հյուսիսային Աֆրիկային և Արևմտյան Ասիային, 4 տոկոսը՝ Լատինական Ամերիկային ու Կարաիբյան շրջանին: Անգրագետների մնացած մասն ապրում են Կենտրոնական Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում և Ավստրալիայում[460]:

<u>Մեծահասակների կրթության ռազմավարությունները զարգացող երկրներում</u>

Ռազմավարությունը ներառում է որոշում այն մասին, թե ո՞րն է նպատակակետը և ինչպե՞ս պետք է հասնել դրան: Ռազմավարությունը մտադրության և նպատակի արտահայտումն է, այսինքն՝ ի՞նչ ենք նախընտրում անել և ինչպե՞ս: Ռազմավարությունը հեռահար նպատակներ է սահմանում, բայց հիմնականում մատնանշում է այդ նպատակների իրագործման որպիսությունը: Ռազմավարությունն արժեքի ստեղծման միջոցն ու գործիքն է[461]: «Ռազմավարություն» եզրույթը, թեև տարբեր ձևերով է սահմանվում, վերլուծվում և պլանավորման մեջ կիրառվում, սակայն ընդհանուր առմամբ ռազմավարությունը ձևակերպում է կազմակերպության առաքելությունը, գլխավոր ու հեռահար նպատակներն ու մտադրությունները, ձեռնարկվելիք միջոցների գործընթացը և անհրաժեշտ ռեսուրսների հատկացումը[462]:

Զարգացած ու զարգացող տարբեր երկրներն աշխարհում, հաշվի առնելով իրենց հնարավորությունները, ինչպես նաև սեփական առանձնահատկություններն ու պայմանները, սահմանում են առաջնահերթություններ՝ գերակայությունը տալով այս կամ այն ծրագրին ու մոտեցմանը՝ ըստ այդմ մշակելով իրենց ռազմավարությունը և նախագծելով կատարվելիք քայլերը:

Ստորև ներկայացնում ենք երեք տարբեր մայրցամաքներում (Աֆրիկա, Ասիա, Եվրոպա) գտնվող և սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր աստիճաններ ունեցող երկրների ռազմավարությունները՝ վերջում անդրադառնալով նաև Իրանին:

-Ռուանդա

---

[459] *World Illiteracy Rate1970-2000 (prognosis for 2005-2015)age 15 years and over. From: http://en.wikipedia.org/wiki/Literacy*

[460] **UNESCO institute for statistic** *(2017),Literacy Rates Continue to Rise from One Generation to the Next, Fact Sheet,No 45*

[461] **Armstrong Michael,** *(2008) Strategic Human Recourse Management: A Guide to the Action,4TH Edition, Publisher: Kogan Page, p.22*

[462]**Բաղաշխանի և Ֆորուզանֆար,** Մարդկային ռեսուրսների ռազմավարության դերը առաջընթացիկ կազմակերպություններում և դրա կապը կազմակերպության ռազմավարության հետ, Ռազմավարական կառավարման 7-րդ միջազգային համագումար, Թեհրան, 2010թ., էջ 2:

Ռուանդայի մեծահասակների ազգային կրթության ռազմավարական ծրագրի նպատակն է առաջադրել մեծահասակների կրթության քաղաքականության իրականացման ճանապարհային քարտեզը և ճշգրիտ շրջանակները.

1.Առօրյա կյանքում գրագիտության ու հաշվապահության կարևորության մասին հանրային գիտակցության ընդլայնում՝ ի շահ անձնական, ընտանեկան ու հասարակական կյանքի բարելավման:

2.Գրագիտության ծրագրերի որակի և չափորոշիչների երաշխավորման գործիքակազմի զարգացում, ազգային մասշտաբով
դրանց հասանելիության ապահովում:

3.Մեծահասակների կրթության շահակից բոլոր կողմերի համար տարբեր մակարդակներում համագործակցության և ներգրավվածության շրջանակի սահմանում՝ աշխատանքների ներդաշնակության և քայլերի արդյունավետության նպատակով:

4.Ինֆորմացիայի արդյունավետ օգտագործման և փաստերի վրա հիմնված պլանավորման միջոցով մեծահասակների ուսումնական ծրագրերի մշտադիտարկման արդյունավետ համակարգի ստեղծում:

5.Ուսումնական ճկուն ու բազմաշերտ ծրագրերի մշակում և ուսումնաօժանդակ միջոցների ապահովում, որոնք կբավարարեն սովորողների ամենատարբեր կարիքներն ու պահանջները:

6.Աղջիկների ու կանանց ներգրավում գրագիտության դասընթացներին:

7.Շարունակական ուսուցման ապահովում և արտադրական, աշխատանքային ու եկամտաբեր հմտությունների փոխանցում նորավարտ գրաճանաչներին, ուսումնական նոր ծրագրերի մատուցում, որպեսզի նրանք կարողանան բարելավել իրենց կյանքի պայմանները և ձեռք բերել աշխատանքային հնարավորություններ[463]:

-Մոնղոլիա

Մոնղոլիայում ոչ ֆորմալ կրթության համար դրվել են հետևյալ ստրատեգիաները.

1.Գրագիտության ինդեքսի բարձրացում,

2.Հանրակրթության մակարդակի բարելավում,

3.Համապատասխան ու ներդաշնակ ծրագրերի գործադրում,

4.Տեխնիկական-արհեստագիտական հմտությունների ընդլայնում,

5.Ստեղծարարության խթանում ու տարածում ,

6.Ինքնուսուցման խթանում ու զարգացում[464]:

-Հնդկաստան

Հնդկաստանում «Գրագիտությունը՝ որպես ազգային պարտականություն» նախագիծը քաղաքական ռազմավարություն է, որն առաջադրվել է 1988թ.-ին և ներառում է հետևյալ դրույթները.

● ԶԼՄ-ների ու մեդիայի միջոցով մարդկանց ներգրավմանն ուղղված կանոնավոր աշխատանքների կազմակերպում:

● Տեղական համագործակցային կառույցների ներդրում:

● Գործառնական ու կիրառական գրագիտության համալիր ծրագրի մշակում ու զարգացում:

● Գրագիտության համաժողովրդական ու զանգվածային շարժման ստեղծում՝ ներգրավելով ուսումնական հաստատություններին, ուսուցիչներին, ուսանողներին, երիտասարդներին, տնային տնտեսուհիներին, բանակի ու զինված ուժերի կադրերին,

---

[463] *Republic of Rwanda, Ministry of Education. (2014)Adult ducation Strategic Plan, 2014/2015-2018/2019. Retrieved April 12, 2017.from: http://www.mineduc.gov.rw/fileadmin/user_upload/pdf_files/Adult_EducationStrategic Plan_final_BASIC IVUYEMO FOR WEB 29 JUNE 2015 In Design 2.pdf*

[464] **Singh, Madhu (2002).** *Adult Education in selected countries in the Asian Region, U Singh, UNESCO Institute for Education,Hamburg.page 22-23.*

հանգստի կոչված զինվորականներին, գործատուներին, բանվորական արհմիություններին[465]:

Մեծահասակների կրթության ռազմավարությունները Եվրոպայում

Ինչպես արտացոլված է աղյուսակ 1-ում, Եվրամիությունն ունի քաղաքականության առաջադրման կենտրոնական ինստիտուտներ, սահմանված կարգեր ու գործիքակազմ, այդ իսկ պատճառով կարողանում է առաջադրել բազմաշերտ ռազմավարություններ[466]:

Մեծահասակների կրթության ռազմավարություններն Իրանում

ԻԻՀ-ում 1989 թվականից մշակվել են զարգացման հնգամյա պլաններ կամ ծրագրեր, որոնցում ձևակերպվել են երկրի տնտեսական, հասարակական ու մշակութային քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները: Մեծահասակների կրթության հիմնահարցը մշտապես ներառվել է այդ ծրագրերում, և մշակվել է որոշակի քաղաքականություն այդ ոլորտում: Իհարկե, քանի որ Իրանում մեծահասակների կրթության հիմնական շեշտը դրվում է գրագիտության տարածման վրա, ուստի հնգամյա ծրագրերում այդ ոլորտի գլխավոր ուղղվածությունը գրագիտությունն է: Օրինակ, 1989-1993թթ.-ին գերակայությունը տրվել էր հասարակության արտադրող խավերի գրագիտությանը, իսկ 1995-1999թթ.-ին շեշտը դրվել էր դպրոցական տարիքի երեխաների պարտադիր կրթության, ինչպես նաև 40-ից ցածր տարիք ունեցող անգրագետների ուսուցման վրա:

Մինչև հիմա մշակվել են զարգացման հինգ ծրագրեր, որոնցում մեծահասակների կրթության նոր կողմերին և ուղղություններին է ուշադրություն դարձվել: Օրինակ, կարող ենք հիշատակել աշխատանքին զուգընթաց ուսումնական ծրագրերը, աշխատողների համար մոդուլային կարճաժամկետ դասընթացները և կառավարիչների ու տնօրենների համար ուսումնական հատուկ դասընթացները: Մյուս ծրագրերից կարող ենք նշել առողջապահական և առողջ ապրելակերպի ուսուցողական ծրագրերը կամ տեխնիկական-արհեստագիտական ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերը:

Բացի զարգացման հնգամյա ծրագրերից, որոնցում նշվում են կրթադաստիարակության ընդհանուր ուղեգծերը, 2008-ին պատրաստվեց նաև անգրագիտության վերացման մասին փաստաթուղթ:[467] Այնուհետև 2014-ին մշակվեց անգրագիտության վերացման մասին նոր փաստաթուղթ, որում խնդիր է դրվել զրոյի հասցնել անգրագիտությունը 50-ից ցածր տարիք ունեցողների շրջանում: Այդ փաստաթղթում նշված գլխավոր ռազմավարություններն են.

-Կրթության նախարարության ներսում ու դրսում առկա բոլոր հնարավորությունների ու ռեսուրսների համախմբում և ազգային կամքի ու հանրային միասնականության խթանում:

-Ֆորմալ կրթության համակարգի միջոցով անգրագիտությունը սնող ուղիների փակում, այսինքն՝ դպրոցահասակ երեխաների շրջանում գրագիտության կրճատում:

---

[465] **Singh, Madhu** *(2002). Adult Education in selected countries in the Asian Region, UNESCOInstitute for Education,Hamburg.page 17.*

[466] **European Union** *(2012), Strategies for improving participation in and awareness of adultlearning.https://www.ab.gov.tr/files/ardb/evt/1_avrupa_birligi/1_9_politikalar/1_9_4_egitim_politikasi/ec_guide_adult_learning.pdf.*

[467] **Իրանի «Գրագիտության շարժման կազմակերպություն»,** Գրագիտության ռազմավարական ծրագիր՝ 2009-2014 թվականների համար (10-ից 49 տարիքային խմբերում), Թեհրան, 2008թ., էջ 27:

-Կրթական ու վարչական կառուցվածքի բարեփոխում, գրագիտության օրենքների ու գործադիր կանոնների համապատասխանեցում:

-Գրագիտության ուսումնական ծրագրերի բարեփոխում՝ շրջաններում կրթության տեղական ռեսուրսներ ստեղծելու մոտեցմամբ:

-Սովորողների ներգրավման և ուսուցման ձևերի բազմազանության ապահովում:

-Գրագիտության և ստացած կրթության ամրապնդում ու խորացում:

-Ծրագրերի գործադրման սահունացման ու արագացման համար օրինական դաշտի ստեղծում:

-Սովորողների և ուսուցիչների (նրանց օգնականների) խրախուսում և մոտիվացիաների խթանում:

-Ուսումնական ընթացիկ ծրագրերում գիտագործնական ու տեխնիկական-արհեստագիտական կրթության շեշտադրում:

-Ոլորտին առնչվող մարմինների ու կազմակերպությունների վստահության ու համագործակցության ձեռքբերում և սոցիալական հնարավորությունների օգտագործում:

-Անգրագիտության կրճատման գործում ուսումնական մեթոդների բարելավում ու համակարգում: Նորարարությունների օգտագործում, սովորողների համար աշխատանքին զուգընթաց ուսուցման արդյունավետ մեթոդների կիրառում:

-Գրագիտության գործընթացների ու ձևերի բարեփոխում, ուսուցում-ուսումնառություն գործընթացի սկզբունքների կարևորում:

-Պետական և ոչ պետական գործադիր մարմինների և հասարակական ինստիտուտների ամբողջ հնարավորությունների և ներուժի օգտագործում, որպեսզի գրագիտության գործի կարգավորումից անցում կատարվի այդ գործընթացի կառավարմանը:[468]

Ի մի բերելով դիտարկումները՝ եզրակացնում ենք, որ աշխարհի տարբեր երկրներ, ելնելով հասարակության վիճակից ու պահանջներից, առաջադրում են իրենց մոտեցումներն ու գերակայությունները մեծահասակների կրթության ոլորտում: Զարգացող երկրները ձգտում են հասարակության լայն խավերի ու մեծահասակների ընդհանուր գրագիտության ու գիտելիքների բարձրացմանը, մինչդեռ զարգացած երկրներն առավել բազմակողմ ռազմավարություններ են առաջադրում մեծահասակների կրթության բնագավառում:

Իրանում անգրագիտության դեմ պայքարի գործը դրված է «Գրագիտության շարժման կազմակերպության» ուսերին, որը սահմանում է ռազմավարությունները և համակարգում անհրաժեշտ աշխատանքները՝ շեշտը դնելով մեծահասակների շրջանում անգրագիտության կրճատման վրա: Անգրագիտության վերացման փաստաթղթում սահմանված ռազմավարություններն ունեն տարբեր կողմեր՝ կառուցվածքային, գործընթացային և գործառնական: Դրանք համալիր են, կարճաժամկետ ու երկարաժամկետ և արտացոլում են ոլորտի դժվարությունները, խնդիրներն ու խոչընդոտներն Իրանում:

[468] **Իրանի «Գրագիտության շարժման կազմակերպություն»,** Անգրագիտության վերացումը ԻԻՀ-ում, Երկրորդ հրատարակություն, 2014թ. From: http://www.lmoiran.ir/uploads/barname_rishekani93.pdf:

Աղյուսակ 1. Մեծահասակների կրթության ոլորտի շահակից կողմերը Եվրոպայում և նրանցից ամեն մեկի դերը առաջադրված ռազմավարությունների համար

	Եվրոպական հանձնաժողով	Ազգային պետություններ	Տեղական և ռեգիոնալ պետություն ներ	Եվրոպական և ազգային մակար-դակներում ՀԿ-ներ, միություններ	Կրթական կառույցներ	Սոցիալական այլ շահակիցներ
ՍՏՐԱՏԵԳԻԱՆԵՐ	● Հետազոտական աշխատանքներիհ ամադրում ● Մեծահասակ. կրթ. լավագույն փորձերի փոխանակում և ներդրում ● Մեծահասակ. կրթութ. սոցիալ-տնտեսական առավելություն-ների հաղորդում և տարածում	● Ազգային տվյալների ու վիճակագրութ. հիման վրա փաստարկված նախագծերի մշակում ● Ազգային կանոնակարգված, նպատակամղված քայլերի շրջանակի գծում ● Գործառնական և քանակական ու որակական նպատակների որոշարկում ● Աշխատանքների որակի վերահսկում և զննում	● Տեղական կարիքների և սոց. ու դեմոգրաֆ. կարիքների ճանաչում ● Ազգային նպատակամղված և կանոնակարգված քայլերի կատարում ● Իրազեկման ծրագրերի կատարում՝ ազգային-ռեգիոնալ մասշտաբով ● Աշխատանքների վերահսկում և զննում ●Ուսումնառության միջակայքի մեծացում	● Մեծահասակ. կրթ. կարիքների և խոչընդոտների ուսումնասիրում ● Լոբիստական աշխատանք քաղաքական ղեկավարների շրջանում ●Սովորողների համար համակարգված շարժումների ստեղծում ● Ոչ պետական կազմակերպութ.ուսուցում և խորհրդատվութ. ● Մեծահասակ. կրթության շաղկապումը նրանց շահերին	● Կրթության առաջարկի մեծացում՝ պահանջարկի բավարարման համար ● Մեծահաս. կրթ.անձնական և սոցիալ. շահերի շաղկապում ● Նախորդ գիտելիքների և գործնական փորձի արժևորում ● Մեծահասակ-ների կարիքներին և առանձնահատ-կություններին համապատաս-խան ուսուցման մատուցում	● Այլ շահակիցների կողմից արտադրված միջոցների և գործիքների տարածում

ADULT EDUCATION STRATEGIES

HAMIDREZA KAMIAR
Yerevan State University, PhD Student of Department of Pedagogy,
"Electric Khodro Shargh company", Human resurce development manager,
Mashad, Iran

Due to resources constraints, countries are inevitably chosen to meet the goals of adult education. And strategy setting is the selection and coordination of actions that from the point of view of Educational Policy makers can help them to succeed in achieving their goals. Given the adult literacy situation in the world, all countries have defined strategies for themselves to coordinate their efforts to eradicate and eliminate illiteracy or low literacy, and also to improve the life quality of adults.

The focus of adult education programs in Iran is on combating illiteracy, So that in the Iran five-year plans of development, we also see more focus on policies and educational strategies in this area. The purpose of the article is to analyze our own strategy proposed in the field of adult education by the countries on three different continents and at different stages of socio-economic development /Rwanda (Africa), Mongolia and India (Asia), EU member countries, and also Iran/. We used the methods of comparison and analysis of data, research sources and documents. As a result, we concluded that developing countries are more inclined towards a strategy to eliminate illiteracy or low literacy, while developed countries, having no such problems, offer more diversified strategies, stimulating the personal and social development of adults.

Key word: *Adult, Adult education, Education strategies, Illiteracy, Developing and developed countries, European Union, Education system of Iran.*

СТРАТЕГИИ ОБРАЗОВАНИЯ ВЗРОСЛЫХ

ГАМИДРЕЗА КАМИАР
Аспирант кафедры педагогики ЕГУ,
менеджер по развитию персонала электрической компании «Ходро Шарг»,
г.Машад, Иран

Для достижения целей, предусмотренных в сфере образования взрослых, многие государства, учитывая дефицит ресурсов, вынужденно оказываются перед выбором и потому устанавливают стратегии и предпринимают шаги, которым придается важность со стороны разработчиков образовательной политики. Все страны разрабатывают для себя стратегии по сокращению безграмотности, а также повышению качества жизни взрослых людей.

В Иране важнейшей задачей образовательных программ взрослых является борьба против безграмотности, и образовательная политика и стратегии в пятилетних программах социально-экономического развития Ирана сконцентрированы вокруг этой задачи. Целью статьи является анализ стратегий в сфере образования взрослых, взятых на вооружение странами, находящимися на трех разных материках и на разных стадиях социально-экономического развития: Руандой (Африка), Монголией и Индией (Азия), странами-членами Евросоюза, а также Ираном. Нами были применены методы сравнения и анализа данных, исследования источников и документов. В результате мы пришли к выводу, что развивающиеся страны наиболее расположены к стратегии устранения безграмотности, в то время как развитые страны, не имея подобных проблем, предлагают более разносторонние стратегии, стимулируя личное и общественное развитие взрослых людей.

Ключевые слова: *взрослый, образование взрослых, стратегии образования, безграмотность, развивающиеся и развитые страны, Евросоюз, образовательная система Ирана.*